# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
## ԱՍՏՂԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
# ՈՐՈՇՈՒՄ N 43

28/11/2017

ԱՍՏՂԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0.01ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՉԱՓԱԳՐԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ ՏԻՄ-ի մասին օրենքի 18-րդ հոդվածի պահանջները , Հրապարակային սակարկությունների մասին ՀՀ օրենքը և ՀՀ հողային օրենսգիրքը.

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1.Հաշվի առնելով այն հանգամանքը , որ նշված տարածքը , որը գտնվում է Աստղաձոր-Վաղաշեն միջհամայնքային ճանապարհի աջ կողմի անմիջապես կամուրջին հարող 0.01 հա մակերեսով տարածքում չնայած հարևանությամբ ապրող բնակիչների բազմաթիվ զգուշացումներին , տվյալ տարածքը վերածել էին աղբավայրի, չափագրել և օտարել աճուրդ-վաճառքի միջոցով , որպեսզի սեփականատերը հետագայում այն տնօրինի ըստ նպատակային նշանակության
2. Աճուրդում հողամասի մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի և չափագրման ծախսերի գումարի չափով , այն է 0.01x2220000+15000=37200 /երեսուն յոթ հազար երկու հարյուր/ դրամ նախավճարը և աճուրդում նվազագույն հավելման չափը սահմանել մեկնարկային գնի 5% չափը , աճուրդի մասնակցության մուտքավճար սահմանել 2000 /երկու հազար/ ՀՀ դրամ
3. Վերոնշված արժեքները ընդունել հիմք և առաջարկել համայնքի ղեկավարին օրենքով սահմանված կարգով կազմակերպել աճուրդ վաճառքը
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՍԼԱՎԻԿ

2. ԱՐՇԱԿՅԱՆ ՏԻԳՐԱՆ

3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԽԻԹԱՐ

4. ԴԱՎԵՅԱՆ ՄԱՆՎԵԼ

5. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏՅՈՄ

6. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՌԱՖԻԿ

7. ԿՆՅԱԶՅԱՆ ԳԱԳԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ